

# ՀԱՆԴԷՍ ԱՄՍՈՐԵԱՅ

## ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ

ԹԻԻ 1-12

ՅՈՒՆՈՒԱՐ - ԴԵԿՏԵՄԲԵՐ

ՃԻԱ. ՏԱՐԻ 2007

### ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Արմեն Պետրոսեան

#### ՄՐՐԻԿ ԵՒ ՍՈՒՐՃ

Մուրճ բառը, բացի սովորական «մուրճ, չաքուճ» իմաստից, ըստ Նոր Հայկազեան բառարանի, նշանակել է նաեւ «տապար, սակր, ուրագ, ուռն, նիգ»: Կայ նաեւ \*մուրճ «մուր» իմաստով, որից ծագում են մրճանալ «սեւանալ», մրճոտ, մրճնոտ «մրոտ, սեւացած», մրճոտիլ «մրոտել, կեղտոտել»: Ըստ Աճառեանի՝ վերջին ձեւերը կազմուած են մուր «թանճրացած ծուխ, ծխի մրուրը, ածխի փոշի» (նաեւ՝ «սեւ, մուր») արմատից, հաւանաբար՝ ինձ ածանցով: Նոյն արմատից, կրճատ կրկնութեամբ կայ մրուր «գիրտ, տկուք, մի բանի տակին նստած կեղտը»: Մրուրը հնում նշանակում էր նաեւ «օղի պղտորութիւն, փոթորիկ». սրանից է ծագում մրրիկ «ծուխ կամ գոլորշի», «ամպ» եւ «փոթորիկ, ալեկոծութիւն»:

Մուրը յանգեցում է հնդեւրոպական \*meu- / \*mu- արմատին՝ \*-tro- կամ \*-ro- ածանցներով (տե՛ս Համապատասխանաբար Աճառեանի եւ Պոկորնու բառարաններում)<sup>1</sup>: Արդեօ՞ք մուրճ «մուր, սեւ» եւ

մուրճ «չաքուճ, տապար» բառերի նոյնականութիւնը պատահական է: «Մուրճ» եւ «փոթորիկ» իմաստների յարաբերութիւնը յիշեցնում է յատկապէս ռուս. *молот* «մուրճ» եւ *молния* «կայծակ» բառերի ստուգաբանական կապը, հմմտ. եւ իսլանդ. *Mjólnir* (*Mjöllnir*) «ամպրոպի աստուած Թորի մուրճ», որը խորհրդանշում է կայծակը<sup>2</sup>: Առասպելաստեղծ մտածողութեան առանձնայատկութիւններով պայմանաւորուած՝ միեւնոյն արմատով կարող են կոչուել աստուածը, նրա այլեւայլ ատրիբուտները ու յատկանիշեր՝ զէնքը, գործողութիւնը, ապա եւ՝ առասպելի տեղայնացման վայրը (հմմտ., օրինակ, հնդեւրոպական \*per-ս- արմատով ձեւաւորուած հետեւեալ իմաստաբանական շարքը՝ «հարուածել», «ամպրոպի աստուած», «ժայռ», «կաղնի». այս անուանումների կապը բացատրում է կայծակի վերաբերեալ հնագոյն պատկերացումներով, ըստ որոնց՝ ամպրոպի աստուածն իր զէնքով՝ մուրճ-կայծակով հարուածում-այրում է լեռնա-

1 Հ. Աճառեան, Հայերէն արմատական բառարան (այսուհետեւ՝ ՀԱԲ), հտ. II, Եր., 1973, էջ 363. Ե.

Pokorny, *Indogermanisches etymologisches Wörterbuch*, B. I. Bern, München, 1959.

2 St' u B. B. Иванов, В. Н. Топоров, *Исследования в области славянских древностей*, Москва, 1974, с. 93, 95:



յին բարձունքների կաղնիները)³: Կայծակի հարուածը ժողովրդական հաւատալիքներում կարող էր յղիացնել որոշ քարեր (ժայռեր) եւ ծառեր կրակի պոտենցիալով, որն ունակ էր դաձնում դրանց շփման միջոցով կրակ առաջացնելու: Այստեղից՝ հարուածել նշանակութեամբ բայը կարող է ունենալ «բլուր, ժայռ» կամ «կաղնի» նշանակող գոյական ածանցեալներ, եւ ընդհակառակը, քարի անուանումը, ինչպիսին Mjohmir-ն է (նախնական իմաստով՝ «քար, աղացաքար»), դառնում է տերմին աստուածային կրակ-զէնքի համար⁴: Ըստ այս տրամաբանութեան՝ մուր, մրրիկ եւ մուրճ բառերի պարագայում կարող էին իրենց լեզուական արտացոլումը ստանալ ամպրոպի աստծոյ՝ այրող-սեւացնող եւ փոթորկածին յատկանիշները:

Հնդեւրոպական ամպրոպի աստուածներին, այսպիսով, բնորոշ էր արխայիկ ամպրոպային զէնքը՝ հմմտ. օրինակ, հնդ. Ինդրայի կայծակ-մահակը կամ գուրգը՝ vajra-ն; որի ուշ իրանական զուգահեռն է «Սասնա ծռերի» հերոսների ու նրանց հակառակորդների յաճախ օգտագործուող զէնքի գուրգ անուանումը: Ոչ միայն գերմանական, այլեւ բալթիկ եւ սլաւոնական ամպրոպի աստուածների ատրիբուտն է մուրճ-կայծակը, որն ուղղակիորէն համեմատելի է անատոլիական ամպրոպի աստծոյ ռազմական կացնի եւ հնդկական Ինդրայի վաջրայի հետ⁵: «Սասնա ծռերում»

ամպրոպի աստծոյ վիպականացած տարբերակն է Սանասարը⁶ զինուած կայծակի թրով: Սա նորամուծութիւն է. հին հայկական ամպրոպի եւ փոթորկի աստուածը պէտք է որ զինուած լինէր մուրճ-կացինով, ինչպէս, ասենք, հնդեւրոպական աւանդութիւններում սկանդինաւեան Թորը կամ բալթիկ Պերկունասը: Այդ է վկայում նաեւ տարածաշրջանի հին ամպրոպային աստուածների խոստիական Թեշուրի եւ արեւմտասեմական Բաալի պատկերազրութիւնը (երկայր կացինը կամ մուրճը նաեւ միւս՝ հին մերձաւորարեւելեան ամպրոպի աստուածների ատրիբուտն է)⁷: Ձեռքերին սկաւառակաձեւ գուրգ եւ մրճաձեւ ռազմական կացին բռնած լինելու պատճառով Թեշուրի ու արարտական զուգորդ Թէշեբային է վերագրուում Կարմիր բլուրից գտնուած մի արձանիկ⁸: Այս աստուածը Ուրարտուում եւ այլուրեք ներկայացոււմ էր ԴՄ «փոթորկի աստուած» գաղափարազրով (չուճեր. բառացի՝ աստուած-քամի): Հայ աւանդութեան մէջ, որպէս հնագոյն ժամանակների վերյուշ, մուրճ-կուանը, որպէս ամպրոպի/փոթորկի աստծոյ քրիստոնէացած կերպարի զէնք, ի յայտ է գալիս Գրիգոր Լուսաւորչի տեսիլքում (Ազարթանգեղոս 735-737)⁹: Մուրճը, որպէս հերոսների զէնք, յաճախ յիշոււմ է Յովհան

6 Մ. Արեղեան, *Երկեր*, հտ. Ա., Եր., 1966, էջ 414-418  
 7 И. М. Дьяконов, *Архаические мифы Востока и Запада*, Москва, 1990, с. 142.  
 8 Տե՛ս, օրինակ, Ս. Հմայեակեան, Վանի թագաւորութեան պետական կրօնը, Եր., 1990, էջ 42 եւ աղիւսակ 14: Թեշուրը սովորաբար պատկերոււմ է ձեռքերին կացին եւ խորհրդանշական կայծակներ բռնած: Ընդհանրապէս, կացինը (երբեմն երկայր) նրա աչքի զարնող տարբերակիչ յատկանիշն է, տե՛ս, օրինակ, Օ. Ք. Գերն. *Хетты*. М. 1987, с. 121:  
 9 Տեսիլքի քննարկումն այս համատեքստում տե՛ս Լ. Հ. Արթախանեան, *Չոհի մարմնից անող երկնային տաճարը. Գրիգոր Լուսաւորչի տեսիլքը ազգաբանական տեսանկիւնից*. - Հայոց սրբերը եւ սրբալպրերը, Եր., 2001:

3 Տե՛ս, օրինակ, Т. В. Гамкрелидзе, В. В. Иванов, *Индоевропейский язык и индоевропейцы*. Тбилиси, 1984, с. 614-615.  
 4 J. Puhvel, *Comparative Mythology*. Baltimore, London, 1987, p. 226-227, n. 1.  
 5 C. Watkins, *How to Kill a Dragon*, New York, Oxford, 1995, p. 429-430. մուրճ-կացնի որպէս հնդեւրոպական ամպրոպի աստուածների զէնքի վերաբերեալ տե՛ս եւ В. В. Иванов, В. Н. Топоров, *Мифы народов мира*. т. 2. М., 1982 (այսուհետեւ՝ МНМ), с. 304, 306, 519; Т. В. Гамкрелидзе, В. В. Иванов, *Мифы народов мира*, т. 2, с. 715:

Մամիկոնեանի «Տարօնի պատմութեան» մէջ, որի վիպական-պատմական հերոսներն ակնյայտօրէն կրկնոււմ են ամպրոպի աստծոյ կերպարն ու առասպելները¹⁰. նոյն պատկերացման հետքերը պահպանուել են նաեւ միջնադարեան քնարական բանահիւսութեան մէջ¹¹:

Ստորեւ՝ որոշ տուեալներ ամպրոպի աստծոյ «սեւ, մուգ, մութ» (\*«այրուած, մրոտ»՝ «այրող, սեւացնող») յատկանիշի առնչութեամբ՝ որպէս այս մեկնաբանութեանն աջակցող փաստարկներ: Հայոց ազգածին աւանդութեան մէջ Արամ նահապետը հնագոյն ամպրոպի աստծոյ մի վիպականացած ժառանգն է՝ Թեշուր-Թէշ-Յեբայի հայկական զուգորդը, որի անունը յանգում է հնդեւրոպական \*rē-mo- / \*rō-mo- արմատին, հմմտ. հին հնդ. rāma- «մուգ, սեւ», հին անգլ. rōmig «մրոտ», հին բարձր գերմ. rāmak «կեղտոտ», միջին բարձր գերմ. rām, rōm «կեղտ, մուր»: Արամատն, այսպիսով համահնդեւրոպական է. ընդ որում, նրա իմաստը կարող է վերականգնուել ոչ միայն որպէս պարզ «սեւ, մուգ գոյն», ինչպէս բերոււմ է բառարաններում, այլ նաեւ «այրուած. մուր, մրոտ»¹²:

Հնդկաստանում Ինդրայի վիպականացած կերպարներից մէկն է «Ռամայանա» մեծ էպոսի հերոսը¹³, որի անունը՝ Rāma-, իմաստաւորոււմ է նշուած համահունչ rāma- «մուգ, սեւ» արմատով եւ

10 Ս. Յարութիւնեան, *Հայ առասպելաբանութիւն*, Բէյրութ, 2000, էջ 112-167  
 11 Ա. Արթիւնեան, «Թուխ մանուկի» պաշտամունքի որոշ արտացոլումներ հայրեններում. - Թուխ մանուկ, Եր., 2001, էջ 49-50  
 12 Արամ անհապետի կերպարի եւ անուան վերաբերեալ տե՛ս Ա. Պետրոսեան, *Արամի առասպելը հնդեւրոպական առասպելաբանութեան համատեքստում եւ հայոց ազգածագման խնդիրը*, Եր., 1997. А. Е. Петросян, *Армянский эпос и мифология*, Ереван, 2002:  
 13 J. Puhvel, *Мифы народов мира*, т. 2, с. 92-93.

ստուգաբանօրէն ուղղակի նոյնական է Արամին: Յիշոււմ է, որ Ինդրան սեւ զգեստ է կրոււմ (Մահաբհարատա, I.3.152), սեւազգեստ են պատկերացուել նաեւ Ինդրայի հետեւորդ մարուտները¹⁴: Սանասարը, որը պատմական համապատասխանում Արամի մի անուանափոխուած ուշ տարբերակն է, էպոսում ուղղակի համեմատոււմ է քամու բերած անձրեւաբեր սեւ ամպի հետ¹⁵ (սա ամպրոպային աստուածների մի տիպիկ բնութագիր է): Որոշ տուեալներ թոյլ են տալիս կարծելու, որ հայկական աւանդական թուխ մանուկները համապատասխանում են հնդկական Ինդրայի հետեւորդ մարուտներին¹⁶: Կովկասում «Սեւ նարթը» հանդէս է գալիս որպէս ամպրոպի աստծոյ մի անձնաւորումը¹⁷: Թեշուրը եւս կապուած է սեւի, մթութեան, մուգ գոյնի հետ. ամպրոպի աստծոյ խեթական ծէսերում սեւ ամանեղէն է օգտագործուել եւ սեւ հաց ու սեւ կենդանիներ (ցլեր, խոյեր) են զոհաբերել¹⁸: Սեւ կենդանիներ են զոհաբերել նաեւ բալթիկական ամպրոպի աստծուն, հնդեւրոպական ամպրոպի աստծոյ թերեւս ամենավառ արտայայտուած ժառանգին¹⁹:

**ԹՈՒՆ, ԹԵՍԷԼ**

Ըստ Ա. Այդինեանի՝ թուխ «թանձր գորշ, սեւ» տերմինը ստուգաբանօրէն

14 K. Kershaw, *The One-eyed God: Odin and Indo-Germanic Männerbünde*, Washington D. C., 2001, p. 202.  
 15 Մ. Արեղեան, *Ու. աշխ.*, էջ 417. տե՛ս եւ Սասունցի Դաւիթ. հայկական ժողովրդական էպոս, Եր., 1939, էջ 83:  
 16 Ա. Պետրոսեան, *Թուխ մանուկ, հնագոյն ակունքները*. - Թուխ մանուկ  
 17 У. Б. Далгат, *Кавказские богатырские сказания древних циклов и эпос о нартах*. - Сказания о нартах - эпос народов Кавказа, М., 1969, с. 111-112.  
 18 В. Г. Ардзаниба, *Ритуалы и мифы древней Анатолии*, Москва, 1982, с. 213-214.  
 19 МНМ 2, с. 304.

առնչուում է թխելու հետ<sup>20</sup>: Վերջինս էլ, բացի ակնյայտ հաց թխելուց, ըստ Նոր Հայկազեան բառարանի, նշանակում է «ջեռուցանել եւ հասունացուցանել՝ որպէս հաւու զձուս» (Հմմտ. «ի թուխս նստել», թխել), եւ բերում են օրինակներ՝ «թխէ զձուս», «կաքաւն... թխեալ զձագ հանէ», «ագուան զձագն թխէ», «թխելով թխեսցին ջուրք» եւ այլն: Այսպիսով, թուխը կարող է մեկնաբանուել որպէս «ջերմային մշակման հետեւանքով եփուած-հասունացած», «այրուած, մրտուած, ածխացած-սեւացած»:

Հ. Աճառեանը տարբերակում է երեք նոյնանուն թուխ- արմատ՝ 1. «սեւ», 2. «հաւերի ձագ հանելը», 3. «հաց եփելու գործողութիւնը»: Ասուածը թուխ է տալիս միաւորել այս արմատները (ապա եւ բրբռ. թխել «զարնելը» համարել երկրորդային զարգացում՝ լաւաշը թոնրին զարնելով թխելուց առաջացած): Ըստ այդմ՝ թուխ տերմինը կարող է յանգեցուել հնդեւրոպական \*ter- «տաք» արմատին, որի \*top- ձայնդարձային տարբերակի \*-lo-ով ածանցեալ նախածեւից (Հմմտ. ռուս. топунб «այրել», менло «տաքութիւն») կանոնաւոր կերպով կ'առաջանար հայ. \*թուղ- հիմքը: Տեսականօրէն չի կարելի բացառել, որ այդ հիմքն ինչ-որ կերպ առնչուում է նաեւ թուղ բառի հետ, որն ուղղակի նշանակում է «թուխ ամպ» \*թուղ ամբ, ապա եւ «մշուշ, մառախուղ» (աւանդուած նաեւ թուխա, թուղի, ապա եւ թխպահոծ եւ թլիպալորդ «բոլորովին մթացեալ» ձեւերով):

Իսկ ինչպէ՞ս է թուղ-ը վերածուել թուխ-ի: Վանայ լճի աւազանի թուխ գետը եւ նրան յարակից թուխ գիւղը, որոնց անունը պիտի առնչուէր այդտեղ գտնուող «թուխ մանուկ» սրբավայրի հետ<sup>21</sup>, հնում

20 Ա. Այդիսեան, Գ. աշխ., էջ 46

21 Ա. Մնացականեան, «Թուխ մանուկ» յուշարձանների մասին. - ՊԲՀ, 1976, 2, էջ 196

կոչուել է նաեւ Թուղի<sup>22</sup>: Դա թերեւս պէտք է լինէր թուխ-ի հնագոյն ձեւը եւ ակնարկում է, որ -իւ-ն այստեղ ածական է: Թուղի-ը դարձել է թուխ:

Արխայիկ աւանդոյթներում առասպելա-բանաստեղծական լեզուի հական յատկանիշերից է նոյն իմաստաբանական դաշտի երեւոյթները ոչ միայն նոյնարմատ, այլեւ նմանահունչ եւ յանգաւորուող անուններով կոչելը: Թուղի/թուխ բառը կարող էր ձեւաւորուել ածուխ, ծուխ, մուխ բառերի ազդեցութեամբ. որպէս այդ տերմինների փոխկապակցուածութեան բանաձեւային օրինակներ՝ Հմմտ. «թխացան քան զածուխ տեսիլք նոցա», «ի ծուխ մեղաւորաց թխանան եւ թմրին արդարք» (ըստ Նոր Հայկազեան բառարանի): Նկատենք, որ ածուխ բառը եւս պէտք է որ ծագէր ածուղ < անծող/անձող ձեւերից<sup>23</sup>:

**ԼՕԾ (ԼՄԻՇ), ԼՄԻՇ**

Հ. Աճառեանն այս բառի առնչութեամբ նշել է նոյնիմաստ պրակ. lavaš, ադրբ. lavaš, քրդ. levaš, վրաց. lavaši, ապա եւ կազանի թթր. lavaš «մի տեսակ խմորեղէն»: Ըստ նրա՝ թէեւ յայտնի չէ, թէ այս ձեւերից որն է նախնականը՝ հայերէ՞նը, թէ՞ պարսկերէնը, բայց յատկանշական է, որ լաւաշն ինչպէս Երեւանում, այնպէս էլ Պարսկաստանում կոչուում է «հայկական հաց»: Բառը հին մատենագիտութեան մէջ գործածուած չէ, բայց աւանդուած է 102-տակ բարդութեան մէջ: Հետագայում նա այս բառը յանգեցրել է սեմական՝ ասորական եւ ասորական ակունքների, Հմմտ. ասուր. lāš, lōš, lōsa «տրորել, ճմլել, շաղախել». հայ բառին առաւել նման համարե-

22 Թ. Յակոբեան, Ս. Մելիք-Բախշեան, Յ. Բարսեղեան, Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների բառարան, հտ. 2, Եր., 1988, էջ 491-493

23 Գ. Զահուկեան, Հայոց լեզուի պատմութիւն. Ասիագրայի շրջան, Եր., 1987, էջ 183

լով ասոր. lāš «խմոր շինել, շաղախել», laišā «զանգուած, խմոր», lāišā «տրորում. 2. ալիւր թրելու եւ հաց թխելու տաշտ», laišonā «մի տեսակ խմորեղէն»<sup>24</sup>:

Կարելի է նկատել, որ բերուած ձեւերը այնքան էլ չեն համապատասխանում լաւաշին ո՛չ ձեւական, ո՛չ իմաստաբանական առումներով: Մինչդեռ լաւաշը ստուգաբանօրէն եւ իմաստաբանօրէն համադրելի է ռուս. նոյնիմաստ лепешка, ապա եւ լիտ. lepašis «կարտոֆիլի եւ գարու ալիւրից պատրաստուած բլիթ/լաւաշ», lapatušis «լաւաշի մի տեսակ» բառերին: Ռուս. բառը սովորաբար յանգեցուել է лепуmb «ծեփել, ծեփելով կերտել» բառերին (\*leip-), որը ձեւաբանօրէն չի կարող կապուել հայ. լաւաշ/լաւաշի հետ: Բայց лепешка-ի համար անաջարկուած է այլ, աւելի ճշգրիտ ստուգաբանութիւն, որն ընդունելի է նաեւ հայ. բառի համար:

Ընդհանրապէս, հացը թխելիս վառարանի՝ փուռի մէջ է դրուում յատուկ բաճաձեւ գործիքների («հացի բաճ») օգնութեամբ: Միւս կողմից՝ տափակ լաւաշն ինքը համադրելի է բաճի հետ: Ըստ այդմ՝ կապուած են համարուում ռուս. лепешка «բլիթ, լաւաշ» եւ лопата «բաճ» տերմինները (Հմմտ. եւ խեթ. lappa, հին ֆրիգ. lappe, լիտվ. lōpeta «բաճ»), ապա եւ лопух «կռատուկ (լայնատերեւ մի բոյս), կռատուկի տերեւ», лепест(ок) «ծաղկաթերթ» եւ այլն, որոնց հետ համադրուում են յուն. λопός «կճեպ, թեփուկ», «բաճ», հին բարձր գերմ. laffa «ձեռքի ափ», «թի» եւ այլ ձեւեր: Սրանց հնդեւրոպական արմատի նախապատմութիւնը թողնուում է չլուծուած, բայց ենթադրուում է, որ նախնական հիմքը պիտի ունենար «լայնօրէն բաց, տարածուած լինել» տիպի մի իմաստ<sup>25</sup>:

24 ՀԱԲ, հտ. IV, Եր., 1979, էջ 639

25 В. Н. Топоров, Заметки по похоронной обрядности (к 150-летию со дня рождения А. Н. Веселовского), Балто-славянские исследования 1985, Москва, 1987, с. 23, прим. 7.

Նոյն ծագումը պէտք է որ ունենայ նաեւ հայ. լաւշը՝ \*-sk(h)- > -շ- տարրով ածանցով: Սա թերեւս բառի հնագոյն ձեւն է (Հմմտ. եւ -աշ ածանցով կազմութիւնները, օրինակ, մատաղ-մատաղաշ): Այս համատեքստում հետաքրքիր են 102, 102տակ բուսանունների եւ բրբռ. լոշտակ, լոշտո «լայն ու երկար» (ականջների մասին) բառերի յարաբերութիւնը, Հմմտ. ռուս. лопуха «մեծականջ, լայնականջ» եւ лопух բուսանունը (Հմմտ. հայ. Ասպաստակի ականջ բուսանունը): Նոյն հնդեւրոպական արմատի թերեւս ոչ հայկական արտացոլման ձեւափոխուած մի ածանցեալը կարող է դիտուել Ասպաստակ բառը, եթէ բարբռներում շատ աւելի լայնօրէն տարածուած լ-ով սկսուող ձեւերը՝ Հմմտ. լապստրակ եւ այլն, դիտենք որպէս առաւել հին, ձեւափոխուած կենդանիների անուններում յաճախ ի յայտ եկող տարուաւորման պատճառով (Հմմտ. եւ լատ. lepus, յուն. λέπρις եւն.)<sup>26</sup>:

**ՀՆՈՑ**

Ըստ Հայկազեան բառարանի՝ նշանակում է՝ «փուռն, վառարան յարկածակոյթ, թոնիր, հալոց, քուրայ, բովք»: Ընդունուած կարծիքի համաձայն՝ կապուում է հուր բառի ենթադրեալ հուն տարբերակի հետ (-ոց ածանցով), որի հնդեւրոպական արմատը n/r փոխանակութեամբ մի ձեւ էր, Հմմտ. խեթ. pahhur-, սեռ. յլ. pahhuenas «հուր», իսլ. fyr, գոթ. fōn «հուր»:

Այս մեկնաբանութիւնը թողնելով ուժի մէջ՝ հնարաւոր է առաջարկել բառի մէկ այլ ստուգաբանական լուծում: Հայ. հնոցը չափազանց նման է խեթերէն նոյնիմաստ happina- «հնոց»-ին, որը մեկնաբանուում է որպէս «հաց թխելու փուռ, կրակի փոս (Հմմտ. թոնիր), վառարան»

ловского), Балто-славянские исследования 1985, Москва, 1987, с. 23, прим. 7.

26 Հմմտ. ՀԱԲ, III, Եր., 1977, էջ 428

(baking kiln, fire pit, broiler [oven]), համտ. հին իսլ. *ofn*, հին անգլ. *ofen*, հին բարձր գերմ. *ovan* (\**ofna-*), հին յուն. *ἰπνός* «վառարան, խոհանոցի օջախ» (միկեն. *i-pōno*), *ἰπνίτης ἄρτος* «փռում թխած հաց», պրոս. *wumpnis* «հաց թխելու հնոց, փռու»<sup>27</sup>: *ἰπνίτης* նորագոյն ստուգաբանական բառարանում այս համադրութիւնը կասկածի է ենթարկւում. *happina-*ն, մի կողմից, համադրում է յուն. *ὀπτός* «խորոված, տապակած»-ին, բայց եւ հնարաւոր է համարւում *happina-*ի արմատական կապը յուն. *ἰπνός*-ի հետ՝ արմատի կրկնութեամբ՝ \**A<sup>w</sup> ǵ-A<sup>w</sup> ǵ-no* > *ipnos* (*A-*ով այստեղ նշանակուած են կոկորդայինները), իսկ միւս կողմից՝ յուն. եւ գերմ. տերմինները համեմատւում են խեթ. *huppar-*ի հետ, որը նշանակում է «թաս, կաւէ անօթ» (\**A<sup>w</sup> ǵup-no-*, համտ. հին անգլ. *ofen* «վառարան», *ofnet* «անօթ»), որն, ըստ մի տեքստի, դրւում է *happina* «հնոցը» ուտելիքը եփելու համար<sup>28</sup>: Հայ բառը կարող էր ծագել \**Horp-* նախածեւից, որը կանոնաւոր կերպով կղաւնար \**hru-*, -ոց ածանցով հնոց:

**ԸՈՒՆ- «մերձենալ»**

Ըստ ընդունուած կարծիքի՝ կապուած է *քուն*, *ք(ու)նել* «քուն, նինջ. քնել» արմատի հետ, որից եւ «մտանել առ կին»։ Այսպիսով, «մերձենալ» իմաստը դիտւում է որպէս մեղմասացութիւն:

Նոյնահունչ «քնել» եւ «մերձենալ» բառերի կապը չէր կարող չզգիտակցուել նաեւ հնում: Բայց եւ այնպէս քնել > մերձենալ զարգացումը առաւել յիշեցնում է

27 В. В. Иванов, *Разыскания в области анатолийского языковедения*. 9-16. Этимология 1977, Москва, 1979, с. 145; В. В. Иванов, В. Н. Топоров, *К проблеме лтш. Jutis и балтийского близнечного культа*. Балто-славянские исследования 1982, Москва, 1983, с. 143.  
28 J. Puhvel, *Hittite Etymological Dictionary*, V. 3. Berlin, New York, 1991, p. 122, 391-392.

ուշ գրական ավանդույթը, քան ժողովրդական մտածողութիւնը: Ըստ այդմ՝ հնարաւոր է ենթադրել, որ այդ իմաստների կապը երկրորդային է՝ նմանահունչ արմատների բաղարկութեան հետեւանք:

Հնդեւրոպական լեզուներում «սէր, մարմնական սէր» իմաստով տերմինների համար վերականգնում են մի քանի նախածեւ, այդ թւում՝ \**keh<sub>o</sub>-*, \**kem-*, \**ken-*, որոնք ներկայացնում են միեւնոյն հիմքի տարբեր ածականներով ածած ձեւերը: Սրանց հետ են կապւում աւեստ. *kā-* «կարօտել», *kāma-* «ցանկութիւն», *čakana* «հաճոյք ստանալ», հին հնդ. *kāma-* «ցանկութիւն, սէր», *Kāma* «սիրոյ աստուած», *kāmayati* «ցանկանում է, զուգաւորւում է», *canas* «հաճոյք», լատ. *cārus* «սիրելի», հին անգլ. *hōre*, նոր անգլ. *whore* «պոռնիկ, պոռնկանալ», լիտվ. *kamaros* «վաւաշտութիւն» եւ այլ բառեր<sup>29</sup>:

Հայերէն արմատի համար հնարաւոր է ենթադրել, օրինակ, \**kō-n-*, \**kō-m-* նախածեւերը, համտ. եւ հնդ. *katana* «ագահ, անյազ» եւ թոխար. *kōñm-* «խաղալ» (\**kōm-ne/o-*):

**ՅԱՇՍ, ԽԱՇՍ**

Նշանակում է «խեղ, կոտրած անդամով, պակասաւոր», որից՝ հաշմիլ, հաշմութիւն, հաշմանդամ՝ զուգահեռ խաշմ, խաշմութիւն, խաշմանդամ տարբերակներով: Գ. Ղափանցեանն առաջարկել է կապել խեթական աղբիւրների *Haš(a)mili* դիցանուանը: Այն հանդէս է գալիս նաեւ *GIS* «փայտ» գաղափարագրով եւ, ըստ հեղինակի, այդ անունով աստուածութիւնը կարող էր լինել հաշմուած՝ կաղ մի աստուած,

29 J. P. Mallory, D. Q. Adams. *Encyclopedia of Indo-European culture*, London, Chicago, 1997, p. 357-358.

որը սարսափեցրել է իր ձեռնափայտով<sup>30</sup>: Աստծոյ հաշմուած լինելը եւ ձեռնափայտ կրելը միայն հեղինակի ենթադրութիւնն է՝ արուած հայկական նմանահունչ բառի հետ զուգադրութեան հիման վրայ: Այս մեկնաբանութիւնը լայն ընդունելութիւն չի ունեցել, բայց որոշ ճշգրտումներով ներկայումս կարող է ընդունուել:

Ղափանցեանը յենւում էր միայն խեթական աղբիւրների՝ իր ժամանակի տուեալների վրայ: Ներկայումս պարզուել է, որ *Haš(a)mili-*ն խաթական դարբնութեան աստծոյ խեթական եւ պալայական անուանաձեւն է՝ յայտնի նաեւ աքադերէն հաղորդմամբ: Անուան նախնական, խաթական ձեւն է, հաւանաբար, *Hašmil* (ավանդուած է *Ha-aš-mi-li-iš* եւ նման ձեւերով), որտեղ *-li-*ը խաթական անուանական վերջածանց է (խեթ. *-li-*): *Ḫašma-*հիւսիսարեւմտակովկասեան լեզուական ազգակցութեան շրջանակներում համապատասխանեցուել է ընդհանուր աբխազադրական \**Χαρš*,<sup>31</sup> նախածեւին, որի ժառանգներն են՝ աբխազ. *Шәаиәәи*, կաբարդինաչերքեզ. *Ләәиәә*, ադրբ. *Ләәиәә* դարբնութեան աստուածների անունները: Յունական դարբնութեան աստծոյ՝ *Ἡεφαίστος* (Հեփեստոս) անունը, որը չի ստուգաբանւում յունարէնով, ըստ Վ. Արձինայի, պէտք է համարուի հնագոյն հիւսիսարեւմտակովկասեան փոխառութիւն<sup>32</sup>: Այս առթիւ պէտք է նշուի, որ երկաթի մշակումը սկիզբ է առել խաթերից, իսկ աբխազադրական բանահիւսութեան եւ ազգագրութեան մէջ մինչեւ վերջերս պահպա-

նուել էին դարբնութեան բացառիկ խոր. եւ արխայիկ պաշտամունքի հետքերը<sup>32</sup>:

Առասպելական դարբինների առանձնայատուկ վիճակը երբեմն դրսեւորւում է նրանց եւ խթոնիկ արարածների նմանութեամբ: Դարբինները եւս երբեմն հանդէս են գալիս որպէս այլանդակ, թզուկ, կաղ արարածներ<sup>33</sup>: Հեփեստոսը կաղ էր երկու ոտքից, աբխազական աստծոյ մի ձեռքը մուրճ էր, միւսը՝ աքցան, եւ մի ոտքը՝ զնդան<sup>34</sup>, իսկ ադրբական *Տլեփշը* իր կտրուած ոտքերի փոխարէն երկաթէ ոտքեր է պատրաստում կամ զոհւում ոտքերը կտրուելու պատճառով<sup>35</sup>: Սա հնարաւոր է դարձնում հայ. հաշմ-խաշմ- արմատի եւ դարբնութեան աստծոյ անուան միջեւ կապի գոյութիւնը: Վ. Արձինբան նշում է վերականգնուած կովկասեան նախածեւում եւ յունական ու խաթական անուններում հնչիւնական համապատասխանութիւնների կանոնաւոր բնոյթը (*x - h - ǵ, p - f - Ø, š<sub>w</sub> - σ - šm*)<sup>36</sup>: Ըստ այդմ՝ հայերէն հաշմ-խաշմ- արմատը կարող է դիտուել որպէս խաթական փոխառութիւն: Հ/խ տատանումը, որը մի շարք ստուգաբանական կրկնակներ է առաջացնում<sup>37</sup>, կոնկրետ այս դէպքում թերեւս կարող է բացատրուել խաթ. *h-*ի առանձնայատուկ հնչմամբ կամ բարբառային տարբերակներով: Հայերէն բառի հետ նոյն ծագումը կարող է ունենալ եւ վրաց. *xašmi* «վատառող կլիմա», *xašmiani* «վատառող», *sixašme* «արատ, թերութիւն, պակասութիւն» բառերը, որոնք Հ. Աճառեանը փոխառեալ է համարում հայերէնից<sup>38</sup>:

30 Г. А. Капанцян, *Малоазийские боги у армян.*— Историко-лингвистические работы, т. 1, Ереван, 1956, с. 303.  
31 Այս հարցերի շուրջ մանրամասն տե՛ս В. Г. Ардзинба, *К истории культа железа и кузнечного ремесла (почитание кузницы у абхазов).*— Древний Восток: этнокультурные связи, Москва, 1988, с. 276-283:  
32 В. Г. Ардзинба, *ԱԶ. աշխ.*, էջ 267-268  
33 *МНМ* 2, с. 22  
34 В. Г. Ардзинба, *ԱԶ. աշխ.*, էջ 276-277  
35 *МНМ* 2, с. 516  
36 В. Г. Ардзинба, *ԱԶ. աշխ.*, էջ 282  
37 Г. Б. Джаукян, *Очерки по истории дописьменного периода армянского языка*, Ереван, 1967, с. 310.  
38 ՀԱԲ, հտ. III, էջ 43

Ի՞նչ կարող էր լինել բառի սկզբնական իմաստը: Հնարաւոր է՝ «հաշմուած, խեղուած, կաղ», որպէս աստծոյ մականունն՝ կազմուած հօտ- «հաշմ» արմատով եւ -իլ անուանական ածանցով: Աւելի քիչ հաւանական է թուում, բայց եւ բացառուած չէ, որ դիցանունը վերածուէր հասարակ անուան եւ կրճատուած տեսքով անցնէր հայերէնին:

**ԾԱՐԱՒ**

Ուրարտական *širabae* բառը Գ. Մելիքիշւիլին կասկածով թարգմանել է որպէս «անբնակ» (?): Այն յայտնի է միայն Արգիշթի I-ի Կարակալայի արձանագրութիւնից ջրանցք անցկացնելու վերաբերեալ, որտեղ նշուում է, որ մինչ այդ *qirani širabae manu úi aini ištiní aiuri* «հողն անբնակ (?) էր, ոչ ոք այնտեղ չէր գտնուում»<sup>39</sup>: Նման համատեքստերում օգտագործուում են *quldini* «ամայի, անպտուղ» (?), *panit-hie* «անմշակ, ամայի» (?), *šuli(e)* «լքուած, անմշակ» (?) բառերը<sup>40</sup>, որոնց բոլորի իմաստներն էլ վերականգնուում են հարցականով, եւ որոնք բոլորն էլ, իհարկէ, ինչ-որ առաւել կոնկրետ նշանակութիւններ պիտի ունենային: Հաշուի առնելով ջրանցք անցկացնելու հանգամանքը՝ կարելի է ենթադրել, որ այս դէպքում արքան շեշտել է հողի անջրդի, պապակ, չոր լինելու հանգամանքը: Այդ դէպքում հնարաւոր է *širabae*-ն համեմատել համահունչ եւ ընդունուած ստուգաբանութիւն չունեցող հայ. ծարաւ-ի հետ: Որպէս նման համատեքստերում կիրառութեան դէպքեր՝ յիշենք երկու օրինակ՝ «իբրեւ գերկիր ծարաւի (այսինքն՝

անջրդի) որ սպասիցէ անձրեւի» եւ «ուրախ լեր անապատ ծարաւի»<sup>41</sup>:

Ուրարտ. *š*-ն հայ. *ծ*-ի ուղղակի համապատասխանութիւնն է, որը փաստարկուած է մեծաթիւ օրինակներով<sup>42</sup>: Սեպագրում կայ ընդամենը երկու նշան *š* պարունակող վանկերի համար՝ *ši* եւ *ša*: Մնացած դէպքերում այդ հնչիւնը կարող էր հաղորդուել *z* պարունակող նշաններով, այսինքն՝ հայ. ծարաւ-ի առաջին վանկի համար հնարաւոր էր սպասել *za-/ša* սեպանշանով մի ձեւ: Քանի որ այդպէս չէ, ապա ուրարտերէն բառի առաջին ձայնաւորն ունեցել է այլ հնչողութիւն, որը հայերէնում հաղորդուել է *ա*-ով: Սեպագրում ամէն մի *i* պարունակող նշան կարող է հաղորդուել եւ *e*-ն (ընդհանրապէս *e*-ի հաղորդումն անկատար է. չկան նշաններ *e* պարունակող բազում վանկերի համար, եւ դէպքերի մեծ մասում *e*-ն հաղորդուել է *i*-ով): Ընդ որում, ուրարտ. *e*-ն հնչել է, հաւանաբար, որպէս լայն [e] կամ նոյնիսկ [œ]: Դա է թերեւս պատճառը, որ բառակզբի ուրարտ. *e*-ին հայ-ուրարտական համընկնումներում սովորաբար համապատասխանում է հայ. *ա*-ն<sup>43</sup>: Բառամիջում եւս ուրարտ. *i*-ին կարող է համապատասխանել հայ. *ա*-ին, համտ. ուրարտ. *Uelikuni*

41 Նոր հայկագեան բառարան, հտ. 1, Եր., 1979, էջ 1012  
 42 И. М. Дьяконов, Материалы к фонетике урартского языка, с. 36; Գ. Ջահուկեան, ԱԶ. աշխ., էջ 430-431 (հմմտ. *šue* – ծով, *Tuarašinei hubi* – Տուարածատափ եւ այլն):  
 43 Հմմտ., օրինակ, ուրարտ. *euri* «տէր»-հայ. *արիորդ* «տիրոջ դուստր». տե՛ս И. М. Дьяконов, ԱԶ. աշխ., էջ 48-49. Գ. Ջահուկեան, ԱԶ. աշխ., էջ 428, 431, 441: Ընդհանրապէս, աման դէպքերում *e*-ի եւ *a*-ի համապատասխանութիւնը յաճախ է հանդիպում, հմմտ. սեպագիր (ասորեստանեան) *Enzite*-ի եւ *Kullimmeri/Qulmeri*-ի համապատասխանութիւնը հայ. Անձիտիմ եւ Քրիմարիմ (կան եւ հակառակ օրինակներ): Նման փաստեր կարելի է գտնել այլուրեք, հմմտ., օրինակ, հայ. Եկեղեց գաւառի յուն. 'Ακλιοσηγή անուանումը:

39 Н. В. Арутюнян, Корпус урартских клинообразных надписей, Ереван, 2001 (այսուհետեւ՝ *КУКН*), с. 478: *УКН* 136, *КУКН* 187.  
 40 Տե՛ս *КУКН*, բառարանի համապատասխան բառայօդուածներում:

– հայ. Գեղարքունի համապատասխանութիւնը:

Ուրարտ. միջձայնաւորային *b*-ն այլ դէպքերում եւս համապատասխանում է հայ. *ւ*-ին, որը պայմանաւորուած է, հնարաւոր է, ուրարտ. *b*-ի շփական *β* արտասանութեամբ<sup>44</sup>, համտ. *abili-* աւել-, *Zabaha* – Զաւախ-ք, *aršibi* – \*արծիւի- զուգահեռները<sup>45</sup>: Հնարաւոր է, որ նման զարգացում տեղի է ունեցել եւ բնիկ հայերէն բառերում (հնդեւրոպական միջձայնաւորային \*b<sub>h</sub>- > v)<sup>46</sup>:

Ուրարտ. բառակերչի *-ae*-ն, ըստ Մ. Խաչիկեանի սիրալիր խորհրդատուութեան, կարող է դիտուել որպէս ուրարտական ածանց:

Ծարաւ-ի համար հնդեւրոպական հիմք գտնուած չէ, այդ պատճառով էլ հաւանական է փոխառութիւնն ուրարտերէնից, կամ հայ եւ ուրարտ. բառերը փոխառուել են մէկ այլ լեզուից: Հ. Աճառեանը պատահական է համարում հայ. ծարաւ-ի եւ արաբ. նոյնիմաստ *šarra*-ի կապը<sup>47</sup>, քանի որ մերժում է արաբական փոխառութիւնների գոյութիւնը հայերէնում մինչեւ VII դ., որը ներկայումս ընդունուում է<sup>48</sup>: Ըստ Հրաչ Մարտիրոսեանի՝ հայ. ծարաւ-ը կարող է կապուել վրացերէն նոյնիմաստ *c'q'urvili*-ին (25.04.2005 նամակ): Երեք նոյնական հնչիւնները՝ *ծ-ր-ւ* հերթագայութիւնը հարեւան լեզուների այս նոյնիմաստ բառերում, իրօք, հնարաւոր է, որ պատահական չէ: Այս բոլորը, այսպիսով, ինչ-որ կերպ կարող են կապուած լինել իրար, թէեւ անհրաժեշտ է նշել, որ նման նշանակութեան բառերը դժուար են փո-

44 Տե՛ս Գ. Ջահուկեան, ԱԶ. աշխ., էջ 430-431:  
 45 И. М. Дьяконов, ԱԶ. աշխ., էջ 30:  
 46 Г. Б. Джаукян, Сравнительная грамматика армянского языка, Ереван, 1982, с. 48.  
 47 ՀԱԲ, հտ. II, էջ 149  
 48 Գ. Ջահուկեան, ԱԶ. աշխ., էջ 485-486


խառուում: Ինչեւէ, հայերէնին ամենամօտ ձեւը ուրարտականն է<sup>49</sup>:

**ԲԱՒԻՂ ԵՒ ԲԱՒԵՂ**

Բաւիղ նշանակում է «լաբիրինթոս», ապա եւ «ծածկուած մուտք տեղ՝ նկուղի նման»: Տարբերակներն են՝ բաւիլ, բաւել. Նոր հայկագեան բառարանը բերում է նաեւ բաւղակ՝ «չինուածք ինչ, կամ առոյթ (առուք) մանուածոյթ, ստուերական» եւ բաւղակաձեւ: Արդէն Հ. Հիւնքարպէյեան տեանը ստուգաբանել է Բաբելոն քաղաքի անուանումից, որը յիշուում, բայց չի ընդունուում Հ. Աճառեանի կողմից:

Տարատեսակ լաբիրինթոսները պատկանում են աշխարհի բազմաթիւ ժողովուրդների աւանդական խորհրդանշանների թուին եւ հանդիպում են նրանց առասպելներում: Բազում տուեալներ վկայում են, ու լաբիրինթոսները պատկերացուել են որպէս ամրոցներ կամ բնակավայրեր: Արեւմտեան քաղաքակրթութեանը պատկանող լեզուներում լաբիրինթոսի անուանումները կապուել են Տրոյա, Երուսաղէմ, Երիբով, Նինուէ եւ Բաբելոն քաղաքների, իսկ մուսուլմանական աշխարհում՝ Ալիի կողմից նուաճուած խիբեր քաղաքի հետ՝ «Տրոյայի դղեակ», «Նինուէ քաղաք», «Երիբովի պարիսպներ», «Երուսաղէմի աւերակներ/արահետ/մղոն», «Խիբեր ամրոց». «Բաբելոն» ձեւը հանդէս է գալիս առանց յաւելումների<sup>50</sup>: Դատելով այս անուա-

49 Այս յօդուածն արդէն գրուած էր, երբ մեզ յայտնի դարձաւ, որ ուրարտ. *širabae*-ն, թէեւ այլ մեկնաբանութեամբ, արդէն համադրուել է հայ. *ծարաւ*-ի հետ. տե՛ս Մ. Այվազեան, *Վանի թագաւորութեան սեպագիր արձանագրութիւնները. հայկական բառարաններ*, Եր., 2003, էջ 40:  
 50 Լաբիրինթոսների, արանց Աճառեանի, իմաստաբանութեան ու անուանումների վերաբերեալ տե՛ս М. Eliade, *Cosmos and History. The Myth of Eternal Return*, New York, 1959, p. 18; М. Элиаде, *Трактат по истории религий*, Т. II, СПб. 2000, с. 273-275; J. Ciriot, *A Dictionary of Symbols*, New York, 1995, p. 173-175; С. Liungman,



նումները՝ ժողովրդական պատկերացումներում լաբիրինթոսն ընկալուել է որպէս կործանման դատապարտուած քաղաքների խորհրդանիշ<sup>51</sup>: Բայց, իհարկէ, լաբիրինթոսը բարդ, ոչ միարժէք խորհրդանիշ է. այս անուանումներում կարող էր շեշտուել նաեւ այդ առասպելականացած քաղաքների բարդ կառոյցը (յատակագիծը) եւ նրանց հասնելու դժուարին ճանապարհը:

Ըստ Մ. Էլիադէի՝ լաբիրինթոսի էական դերը սրբազան «կենտրոնը», որպէսիք այդ քաղաքներն են, պաշտպանելն էր: Կենտրոնին հասնելու դժուարին ճանապարհը առասպելաբանական համատեքստում «անդրաշխարհի ճանապարհի» մի տարբերակն է: Եւ յատկանշական է, որ հայ առասպելաբանութեան մէջ, սկսած ազգածին աւանդութիւնից մինչեւ «Սասնայ ծռեր», Միջագետքն իր մայրաքաղաքով հանդէս է գալիս որպէս Հայաստանի եւ նրա հերոսների հակառակորդ կողմ, այսինքն՝ առասպելաբանական համատեքստում անդրաշխարհ: Սկզբնապէս դա Բաբելոնն էր, որը հետագայում փոխարինուում է Բաղդադով: Ընդ որում, Բաբելոնի արքայ Բելը, իսկ էպոսում՝ Բաղդադի խալիֆը մահուան աշխարհի տիրակալի վիպական տարբերակներն են:

Խորհրդանշանագրութեան մէջ Բաբելոնն է կոչուում յատկապէս լաբիրինթոսի մի տարատեսակ՝ բաղդաքած իրար մէջ ներգծուած ուղղանկիւններից (տիպիկ լաբիրինթոսը կազմուում է իրար ներգծուած հակադարձ պարուրածեւ գալարներից). այս խորհրդանիշը լայնօրէն տարածուած է Կովկասում, Կենտրոնական եւ Արեւելեան Եւրոպայում:

Ուրարտական արձանագրութիւններում Babilu- է կոչուում Հայկական լեռնաշխարհից հարաւ ընկած, բնակչութեամբ եւ մշակոյթով բաբելականացուած մի երկրամաս (Դիալա գետի վերին եւ միջին հոսանքներում)<sup>52</sup>: Այսինքն՝ Հայաստանի հին բնիկներն այդպէս են կոչել Բաբելոնը (յաճախ իմաստաւորուում է որպէս արքա. Bāb-ilu «Աստոյ դարպաս»): Բաբելոնը գոյացել է վերջին ձայնաւորի կանոնաւոր անկմամբ, իսկ միջձայնաւորային Ե-ն վերածուել է W-ի: Այդ երեւոյթը յայտնի է հայ-ուրարտական այլ համապատասխանութիւններում (հմմտ., օրինակ, ուրարտ. abili- հայ. աւել- զուգահեռը) եւ պայմանաւորուած է, հնարաւոր է, ուրարտ. Ե-ի շփական β արտասանութեամբ<sup>53</sup>: Հաւանական է, որ նման զարգացում տեղի է ունեցել եւ բնիկ Հայերէն բառերում (հնդեւրոպական միջձայնաւորային \*bh- > w)<sup>54</sup>:

Բաբելոնն, այսպիսով, ծագում է բաբելական Bābīlu-ից՝ հնարաւոր է, բայց թերեւս ոչ պարտադիր, ուրարտական միջնորդութեամբ: Հնագոյն Հայերէնում Բաբելոն պիտի կոչուէր նաեւ հէնց Բաբելոն քաղաքը, որը հետագայում փոխարինուել

52 Տե՛ս, օրինակ, КУКН, с. 500: Կարծիք կայ, որ ուրարտական տեքստերի Բաբիլու երկիրը հիւսն էր Բաբելոնն է. տե՛ս Յ. Կարապետեան, Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբիւրներում, I, 1. սեպագիր տեղանուններ, Եր., 1998, էջ 311:  
53 Տե՛ս Գ. Ջաֆուկեան, նշ. աշխ., էջ 430-431:  
54 Г. Джаукян, Сравнительная грамматика армянского языка, с. 48.

Dictionary of Symbols, New York, London, 1991, p. 163; L. de Freitas, Labyrinth, The Encyclopedia of Religion (ed. M. Eliade), V. 8, New York, 1987, p. 411-419 (տրոպական անուանումները՝ էջ 413) եւ A. Golan, Prehistoric Religion: Mythology, Symbolism. Jerusalem, 2003, p. 300-315 (եղած կարծիքների քննարկումը՝ 302-303, Բաբելոն կոչուողների մասին՝ 313-315). լաբիրինթոսների բաբելոնեան ծագման աղբիւ՝ Böhl F. M. Th. 1935. Zum Babylonischen Ursprung des Labyrinths. Miscellanea Orientalia Dedicata Antonio Deimel Annos LXX Complenti / Analecta Orientalia, 12, Roma, 1935. լաբիրինթոսի վերաբերեալ տարածաշրջանի առասպելների համատեքստում՝ L. Abrahamian. Hero Chained in a Mountain: on the Semantic and Landscape Transformation of a Proto-Caucasian Myth. Aramazd, 1, 2007.

51 L. de Freitas, նշ. աշխ., էջ 413

է Աստուածաշնչի յունարէն տարբերակից եկած Բաբելոն ձեւով:

Բաբիլոն-ի արխայիկութիւնը ցոյց է տալիս, որ լաբիրինթոսների մի տիպ կարող էր կոչուել «Բաբելոն» արդէն հնագոյն ժամանակներում: Ըստ Նոր Հայկազեան բառարանի՝ բաբիլոն ի-ա յոլովման բառ է (առանց օրինակների): Հաշուի առնելով ուրարտ. Babilu ձեւը՝ կարելի է կարծել, որ տեղի է ունեցել հիմքի հետագայ փոփոխութիւն: Հաւանական է, որ այս նոյն արմատին է պատկանում եւ բաբելոն «շրթնածաղկաւոր խոտաբոյսերի մի ցեղ, լատ. Phlomis», ուր կարող էին դեր ունենալ այդ բոյսերի յատկանիշերը:

Լաբիրինթոսների մի տեսակի անգլերէն անուանումն է bower<sup>55</sup>, որի առաջնային նշանակութիւնն է «բնակատեղի, սենեակ, տաղաւար»: Արդեօք հնարաւոր չէ՞, որ bower «լաբիրինթոսը» սկզբնապէս ինչ-որ միջնորդութեամբ նոյնպէս կապուած լինէր Բաբելոնի հետ, իսկ հետագայում բաղարկուէր «բնակատեղի» նշանակութեամբ բնիկ անգլերէն համահունչ բառի հետ:

**ՄԱՇՏՈՅ / ՄԱՇՅՈՅ**

Հ. Աճառեանը ներկայացնելով Մաշտոց (տարբերակ՝ Մաշթոց) անուան եղած ստուգաբանութիւնները՝ դրանք համարել է կամայական եւ գիտութեան համար արհամարհելի<sup>56</sup>: Հետագայում հարցին անդրադարձել են Գ. Ջահուկեանը, Ա. Մնացականեանը, Գ. Սիմոնեանը, Զ. Ռասելը, որոնց ստուգաբանութիւնները եւս չեն կարող միարժէքօրէն ընդունելի համարուել<sup>57</sup>:

55 A. Golan, նշ. աշխ., էջ 306  
56 Հ. Աճառեան, Հայոց գրերը, Եր., 1984, էջ 303-304  
57 Գ. Ջահուկեան, Հայերէնը եւ հին հնդեւրոպական լեզուները, Եր., 1970, էջ 74. Ա. Մնացականեան, Մաշտոց անուան ստուգաբանութիւնը, «Լրաբեր հաս. գիտութիւնների», 1979, 8. Գ. Սի-

Հայկական անուանաբանութեան համատեքստում առաւել ընդունելի է թւում Մաշտոց անձնանուան մեկնաբանութիւնն՝ ըստ մաշտոց հասարակ անուան, որը նշանակում է, հաւանաբար, «մաշտելու գործիք, անասունների մազը քերելու կամ գլուխը գերծելու» համար<sup>58</sup>: Այս ստուգաբանութիւնն առաջարկել են Գ. Տէր-Մկրտչեանը եւ Գ. Խալաթեանը, որոնց մեկնաբանութիւնները, միւսների շարքում, չեն ընդունուել Հ. Աճառեանի կողմից: Հետագայում այդ ստուգաբանութեանն անդրադարձել է Զ. Ռասելը, որը, հնարաւոր, բայց քիչ հաւանական համարելով այն, իրանական ստուգաբանութիւն է առաջարկել Մաշտոցի համար: Ստորեւ ներկայացուում են մեր փաստարկները:

Եթէ մաշտոց բառը կար հին Հայերէնում, ապա զարմանալի բան կը լինէր եթէ Մաշտոց անունն իմաստաւորուէր այլ կերպ: Բառը չի յիշուում Նոր Հայկազեան եւ Առձեռն բառարաններում, բայց ակնյայտօրէն վաղնջական է: Այն պէտք է մեկնաբանուի որպէս ոց ածանցով կազմութիւն, ինչ-որ մաշտ- «քերել, քերծել» կամ նման մի բան նշանակող արմատից: Գրաբարում կայ մաշտիլ «մազերը թափել, ճաղատ դառնալ» (որից եւ մաշտել, ենթադրաբար՝ «խլել, քայքայել, թափել»)<sup>59</sup>: Սա մօտ է մաշտոց «գերծելու գործիք» իմաստին. հմմտ. գրբ. գերծուլ «քերել, մազերը կտրել, ածիլել»: Նոր Հայերէնի բառարան-

մոնեան, Մաշտոցի անուան ծագման շուրջը. «Լրաբեր հաս. գիտութիւնների», 1988, 5. J. Russell, The Name of Mashtots, Annual of Armenian Linguistics, 15, 1994:  
58 Ս. Մալխասեան, Հայերէն բացատրական բառարան, հտ. 3, Եր., 1944, էջ 260. տե՛ս եւ Ժամանակակից հայոց լեզուի բացատրական բառարան, հտ. 3, Եր., 1974, էջ 481. Է. Աղալեան, Արդի հայերէնի բացատրական բառարան, հտ. 2, Եր., 1976, էջ 970:  
59 ՀԱՅ, հտ. III, Եր., 1977, էջ 262

